

ծուծիւնը միայն Զրօրհնէքի արարողութեան վերապահուած է :

Պաղեստին այցելութեան ատեն ան կը հանդիպի Ռամմա, ուր կային, կ'ըսէ, յոյներ եւ հայեր ալ : «Բայց վերջինները միայն քիչ թիւով են» 3) :

Պատմելով խալաքի քարոզիչ եղբոր մը հետ ունեցած իր տեսակցութիւնը, «ան ինձի ըսաւ հայոց վրայ իր տարած յազթանակներու մասին» 4) : Սիոնի վանքին այս խալաքի քարոզիչը, խօսելով մեր ուղեգրին Սուրբ Հրոյն արարողութեան մասին, որուն ինք իսկ սարսափով ակնատես եղած եւ «կեղծիքը» ստուգած է, կը պատմէ .

«Այս ձեռնահամայութեան (կրակ հանելու) նախորդ երեկոն, որ Աւագ Ուրբաթի երեկոն է, ամէն բան պատրաստուած ըլլալով այս յոյն եւ հայ կեղծիքին համար, ես այսպէս կը կոչեմ (կ'ըսէ ան), որովհետեւ այս տեսակ ազանդաւորներուն երկու պատրիարքները (թէ եւ կրօնքին ուրիշ կէտերուն մէջ իրարմէ տարբերելով) իրարու կը միանան այս կէտին մէջ : Այս պատրիարքները, իրենց յատուկ կրօնաւորներէ օժանդակուած, իրենց երկեակ թափօրը կը կատարէին Սուրբ դերեզմանին շուրջ, ուր հաւաքուած էր անթիւ ժողովուրդ՝ կամ իրենց հաւատքին եւ կամ թէ իրենց հետաքրքրութեան համար հանդիսատես ըլլալու» :

«Աւագ Ծարաթ օրը յոյն կրօնաւորներու (յոյները ըսելով կը հասկցուն ըրողը ազգութիւնները, որոնք անոնց եկեղեցւոյն կը դաւանին, որպէս ուստի վրայիները, մինկրեւները, եւն.) թափօրին գլուխը կը կազմէին, առաջնորդուած ըլլալով քանի մը դրօշներէ, որոնք աւելի զինուորական քան կրօնական երեւոյթ մը ունէին : Անոնցմէ վերջ, կը յառաջանային երկու կանոնաւոր շարքեր զպիւրներու, ճոխ ու երկար շապիկներով :

Անոնցմէ իւրաքանչիւրը կը կրէր մեծ վառուած մոմեր, որոնք իրենց երկարութեան եւ մեծութեան համար դուցէ սիւներ նրկատուին : Յետոյ կը հետեւէին սարկաւազները իրենց կարգին յատուկ զգեստներով : Եւ հուսկ, կուգային Արքեպիսկոպոսները եւ Եպիսկոպոսները, չքեղօրէն ոսկեղիպակով, հանդերձուած ըստ իրենց սովորութեան, իրենց խոյրերը գլուխնուն վրայ : Յետոյ կուգային հայերը նոյն կարգով հագած իրենց ամենէն ճոխ եկեղեցական տարազները (հայերը ըսելով կը հասկցուն այդ ազգին բոլոր ազանդները, բաժանեայն Յակոբիկեաններու, Տիոսկորոսեաններու եւն.) : Ասոնցմէ յետոյ սիւրբացիները եւ ամենավերջը զպտինները, եւն. : Իւրաքանչիւր Պատրիարք կը կազմէր իր կրօնաւորներուն յետնապահը, բունած հովուական գաւազանը (հայոցը հնազարեան գաւազանի մը նման է), կամ թէ գաւազանը, որով անոնք, ըստ սովորութեան, կը ներկայացնեն Ս. Անտոնը, պարզ կոթով մը : Զախ ձեռքով, որպէսզի ան աջով կարենայ օրհնութիւն տալ : Յունաց Պատրիարքը կը փակէ թափօրը : Սարկաւազները թափօրին բոլոր ընթացքին կը խնկարկեն, եւ ան (յունաց պատրիարքը) իր օրհնութիւնը կուտայ, երբ կ'երգեն Ելթիսուս» :

«Թափօրի երրորդ չրջանին այս (յունաց) պատրիարքը, հայոց եպիսկոպոսին ընկերակցութեամբ, (հայոց) Պատրիարքին բացակայութեան առթիւ, առանց որեւէ ուրիշ վկայի ներս կը մտնեն Սուրբ Գերեզմանէն, որուն բանալին կը պահէ ինք : Հայը կը բանայ դուռը, որ իրենց վրայէն կը գոցուի : Եւ կարգ մը ենիչէրիներ, որոնք ասոր համար վճարուած են, կը ստիպեն մնացեալ ժողովուրդը կենալ յարգելի հեռաւորութեան մը վրայ, մինչ կրօնաւորները, որոնք դուրսը կը մնան, կ'երգեն այնքա՛ն բարձրաձայն, որ (ինչպէս ինձ տեղեկացընողները կ'ըսեն) այս հրաշքին գործադիրներուն կայծքարէ կրակ զարնելուն ձայնը

3) Անդ՝ էջ 79 :

4) Անդ՝ Նայն :